Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-271[1]-25.05.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետից հանել «պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» օրենքի 25.1-ին հոդվածի 1-3-րդ մասերով, 26-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և» բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Եթե սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-12-րդ կետերում նշված պաշտոնները զբաղեցրած անձի՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված հավելավճարի չափը գերազանցում է պաշտոնային դրույքաչափի 30 տոկոսը, ապա կենսաթոշակի՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հաշվարկի մեջ ընդգրկվում է հավելավճարի գումարի 30 տոկոսը:»:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 12-րդ մասում «Քննչական կոմիտեի մասին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» բառերով.

2) 12-րդ մասի 2-րդ կետում «14-րդ հոդվածով» բառերը փոխարինել «13-րդ կետով» բառերով.

3) 13-րդ մասում «2-րդ հոդվածի 1-ին, 8-12-րդ մասերում» բառերը փոխարինել «2-րդ հոդվածի 1-ին մասի 8-12-րդ կետերում» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետից հանել «պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» օրենքի 25.1-ին հոդվածի 1-3-րդ մասերով, 26-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և» բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Եթե սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, ~~5-րդ, 7-րդ և 8-րդ~~ 5-12-րդ կետերում նշված պաշտոնները զբաղեցրած անձի՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված հավելավճարի չափը գերազանցում է պաշտոնային դրույքաչափի 30 տոկոսը, ապա կենսաթոշակի՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հաշվարկի մեջ ընդգրկվում է հավելավճարի գումարի 30 տոկոսը:»:

Հոդված 3~~2~~. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 12-րդ մասում «Քննչական կոմիտեի մասին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» բառերով.

2) 12-րդ մասի 2-րդ կետում «14-րդ հոդվածով» բառերը փոխարինել «13-րդ կետով» բառերով.

3) 13-րդ մասում «2-րդ հոդվածի 1-ին, 8-12-րդ մասերում» բառերը փոխարինել «2-րդ հոդվածի 1-ին մասի 8-12-րդ կետերում» բառերով:

Հոդված 4~~3~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-271[1]-25.05.2022,08.06.2022-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	***Կառավարություն***	Օրենքի լրամշակված նախագծի փոփոխված տարբերակի 1-ին հոդվածով խմբագրվող՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետ	Առաջարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետից հանել «պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» օրենքի 25.1-ին հոդվածի 1-3-րդ մասերով, 26-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և» բառերը: Առաջարկության նպատակը տեխնիկական վրիպակը վերացնելն է: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-11-րդ կետերի «ա» ենթակետերով ամրագրվել է, որ 20 տարվա մասնագիտական ստաժը տալիս է օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք՝ անկախ պաշտոնից ազատվելու հիմքերից: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			12-րդ կետի «ա» ենթակետով նույնաբովանդակ դրույթ հարկ է նախատեսել պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձանց համար:		
2.	***Կառավարություն***	Օրենքի լրամշակված նախագծի 1-ին (փոփոխված տարբերակում՝ 2-րդ) հոդվածով Օրենքի 5-րդ հոդվածում լրացվող 3.1-ին կետ	Առաջարկվում է Օրենքի 5-րդ հոդվածում լրացվող 3.1-ին կետում «5-րդ, 7-րդ եւ 8-րդ» բառերը փոխարինել «5-12-րդ» բառերով: Նախագծով առաջարկվում է Սահմանադրական դատարանի դատավորի, ժամկետ Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած անձի, միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձ և դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց կենսաթոշակի չափը հաշվարկելիս հավելավճարի համար սահմանել վերին շեմ՝ 30 տոկոս: Քանի որ հավելավճարի հաշվառմամբ հաշվարկվում է նաև օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 9-12-րդ կետերում նշված պաշտոններ զբաղեցրած անձանց կենսաթոշակները, խտրականության բացառման սկզբունքի կիրառմամբ,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			առաջարկվում է նախագծի խնդրո առարկա դրույթը տարածել նաև դատախազների և քննչական մարմինների քննիչների վրա: Հակառակ դեպքում կարող է առաջանալ իրավիճակ, երբ, օրինակ քննիչի կենսաթոշակը կգերազանցի դատավորի կենսաթոշակի չափին, ինչը չի բխում օրենքի տրամաբանությունից (ինչը դրված է օրենքով կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգում՝ դատավորների համար պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի նկատմամբ կիրառվում է 55 տոկոս, իսկ դատախազների և քննիչների համար՝ 50 տոկոս):		
3.	***Կառավարություն***	Օրենքի լրամշակված նախագծի 2-րդ (փոփոխված տարբերակում՝ 3-րդ) հոդվածով փոփոխվող Օրենքի 9-րդ հոդվածի 12-րդ մաս	Առաջարկվում է Օրենքի 9-րդ հոդվածի 12-րդ մասի 2-րդ կետում «14-րդ հոդվածով» բառերը փոխարինել «13-րդ կետով» բառերով: Առաջարկության նպատակը տեխնիկական վրիպակը վերացնելն է: Օրենքի լրամշակված նախագծով առաջարկվում է խնդրո առարկա մասում «հոդվածով» բառը փոխարինել «կետով» բառով: Հարկ է նկատի ունենալ, որ այս դեպքում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հղումը վերաբերում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ և ոչ թե 14-րդ կետին: Եթե «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձի մասնագիտական ստաժը նշանակման օրվա դրությամբ կազմել է 20 օրացուցային տարվանից պակաս, ապա նրա կենսաթոշակի իրավունքը պետք է իրացվի օրենքի 1-ին հավելվածով սահմանված պաշտոններ զբաղեցրած անձանց համար սահմանված կարգով և ոչ թե՝ պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչված անձանց համար սահմանված կարգով:		